ինքնիրեն կ'ամաչէ. ուստի փորձուած բան է որ իրմէ առնելիք ունեցողները զինքը չվճարելու տեղը՝ ինք զանոնք չվճարեր, ըրած անիրաւութիւնը միտքը կուգայ: Կերած ստակը կարծես որ ստամոքին վրայ քար կորած կը մնայ, ոչ ետ կրնայ տալ, ոչ շահը կը տեսնէ: Սիրտը կարօտութեան մէջ կը ձգէ, ինք չհարըստնար. հարըստնայ ալ նէ՝ ամենուն ատելի կ'ըլլայ. որբևարիին ախուվախը առջևէն կ'երթայ՝ ամենուն հռչակելու որ ունեցած հարստութիւնը իրը չէ: Հեթանոս փիլիսոփաներն ալ բնական խելքով ճանչցան ու ըսին թէ անիրաւ շահէն շատ աւելի աղէկ է որ և իցէ վնաս:

*

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

Գ.

Տաղ յէն 'ի վերայէն սրբոյն Գրիգորի, Յոհաննու Պլուզ վարդապետի ասացեալ:

ԴԱՐՁԵԱԼ Քնար հայկական և դարձեալ իմ Գրիգորիոս, կրկնաբանենք Աստուածաբանին սրտալից գրչաւը. Գրիգոր Լուսաւորիչ. անմահական անուն, որ գրեթէ մեր Հայ անուան հետ կապած է եկեղեցւոյ և պատմութեանց մէջ. փառաւո՛ր անուն, որ առաւել քան զամէն Հայոց փառաւոր անունները գերազանց զանուելով՝ յաղթեր է Հայաստանի յուշամուաց բաղդին և ամէն տեղ հռչակուեր է. արդարև նման արևուն որ մեր աշխարհէն ծագեր՝ ու իր ճառագայթները հասուցեր է չորս բոլորը. ամէն ազգ լսեր է Հայոց Գրիգորին Լուսաւորիչ անունը. շատ օտար աշխարհքներ իրեն սեղան կանգնած են. դեռ կեցած են Իտալիոյ ափանց վրայ իրեն եկեղեցիները, և տարուէ տարի կը նորոգուին հոն իր բազմօրեայ տօնախմբութիւնները ի- տալական ազգերէ. և երբոր անոնք Հայոց և իրենց պաշտպանին ներբողական գովեստներ կը հիւսեն, կարծես թէ անդադար կը նորոգուի եկեղեցւոյ պերճախօս ձայնը, որ իր մէկ հատիկ Ոսկեբերանին ընչովը պատուեր է Հայոց Լուսաւորիչը: Հայոց սրտէն աս անունը քերել աւելի դժուար է՝ քան թէ Մասեաց ծերացած գլխէն ձիւները թափել. և այն անքակ սէրն ու պաշտօնն է մեզի յոյս հաստատուն՝ որ ոչ երբէք ազգերնիս պիտի կորէ իր յոյսը ասանկ զօրաւոր պաշտպանէ մը, և ոչ 'ի սպառ պիտի մոռնայ այն մեծ հոգին ալ իր քրիստոսանման չարչարանաց գինը: Ես յոյսը և փափագն է որ Պլուզ վարդապետին սիրտն ու գրիչն ալ շարժեր է՝ ազգին խեղճ վիճակին մէջէն այս ճարտար և ընտիր տաղս երգելու մեր հօրը. և գրեթէ 550 տարուան միջոցը այս օրուանս պէս տեսնելով՝ զմեզ իրեն ձայնակցելու կը հրաւիրէ, կամ թէ ինքը մեզի բերան կ'ըլլայ. ինչպէս որ կարդացողն ալ կը վկայէ՝ թէ որ ունի բարեսէր Հայու սիրտ:

Իսկ այս Պլուզ վարդապետին վարքը թէպէտ և լաւ չենք գիտեր, բայց յայտնի է թէ Պլուզ վարդապետը չէ՝ որ Յոհաննէս Երզնկացին է. հապա իրմէ քիչ մը ծեր է, ԺԳ դարուն մէջ վախճանած. որովհետև այսպէս Յիշատակարան մը ունինք ՉԽԲ (1293) թուին գրած. “Սուրբ գիրս զայս ,, զՍաղմոսաց մեկնիչս (Վարդանայ), ,, Յոհաննէս Պլուզ վարդապետ 'ի ,, յիւր մահուն օրն պարգևել եր Սկ- ,, ներոյ վանացս, իւր հոգոյն յիշատակ. ,, Քրիստոս Աստուած հանգուսցէ զիւր ,, հոգին... թվ”. ՉԽԲ ,,: Արդ գիտենք որ Յոհաննէս Երզնկացին աս յիշեալ թուականէն երեսուն տարի կամ աւելի ալ վերջը մեռաւ:

Ոտանաւորին ծայրերը կը կապեն ԳՐԻԳՈՐԻՈՍ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՀԱՅՈՑ, իսկ մէջը կապած է հեղինակին ճարտար գրիչը ճարտարագոյն ոտին հետ հայկական քնարին թելերուն:

ԳՐԻԳՈՐԻՈՍԻ բազմաչարչար սրբոյն
Զեն 'ի վերապէն այսօր տօնեմք եղբարք ։
Ռախձան ցընծութեան Հայաստանեայցս եղեն
Կուսանքըն երջանիկ յարեւմտից ծագեալ ։
Ի տեղի կատարման արեան սրբոցն հեղման
Խորանք երկնայինք նըկարեցան յերկրի ։
Գոյն կարմիր ներկեալ և ոսկեղէն խարիսխ ,
Ի սեանց հրոյ ւ ամպոյ լուսոյ կամար կապեալ .
Որով ծաղկեցաւ հողանիւթեայ երկիր
Երկնագոյն ներկեալ կապոյտերանգ դաշտիւք ։
Ռոպէից մասանց յերկրէ 'ի վեր բուսեալ
Սեղանք սրբութեան աստղանըման անթիւ ։
Ի մէջ խորանացն աղբիւր ջըրոց բըղխեալ ,
Գետօրէն հոսեալ ծովանըման ծըփեալ .
Որք անցանէին երամք այծից սեւոց
Գառինք լուսակիզն քրիստոսազգեաց ներկեալք ։
Սուրբ աւազանին ջրով խաչակիցք որդւոց ,
Հաւատովք 'ի Հայր Հոգւովըն սուրբ մաքրեալք ։
Լուսաւորիչ հոգւոց հայր Գրիգորիոս ,
Ի մեզ հայեցիր վերօք խոցեալքս 'ի մահ ։
Ողբամք արտասուօք բանաւոր քո հօտքս ,
Զըրկեալք 'ի հովուաց և այցելու տերանց ։
Հիւծեալ մաշեցան հաւատոյ մանկունք ,
Գերեալ ցըրուեցան յօտար ազինս ազգաց ։
Սրբութեան խորանքըն հիմնարկեալք 'ի քէն ,
Աւեր ամայի կան խաւարեալ անընակ ։
Արեամբ գնեալ գառինքըն Քրիստոսի հօտին
Սեւացեալ մեղօք դարձան յերամս այծից .
Հովիւքըն հօտից գայլք եղեն հօտին ,
Սարատէն զխաչինան չարչարանօք ստացեալ ։
Ուխտըք օրինաց և կանոնաց սահման
Խրամատեալ քակտին օրինադրեալքն 'ի քէն ։
Ռաբունական իմաստից հանճար
Նուազեալ պակասին յանբարեսէր բարուց .
Ի կարգս երկնայնոցըն վիճակեալ դասիւ
Անվարժք յիմաստից այսօր տիրեն հօտից ։
Չունիմք այցելու կամ բարեխաւս գըթած
Որ զեւս երջանիկ տեսանողըն պատմէ ։
Հայրըդ բազմագութ Հօրն երկնաւորի պատկեր ,
Առ քեզ պաղատիմք , բարեխօսեա առ տէր ։
Անկեալ և ցըրուեալ քո վիճակեալ խաշանցս
Դարձ առնել զերեացն և քաւութիւն մեղաց ։
Յաթոռ տիրական քո ընստեալն այսօր
Հայցեա առ Յիսուս մեզ լուսատու շնորհել .
Որդւոցս Արամայ զպըսակաւորն արքայ
Ի հոգւոյն խընդրեսցես միշտ զօրաւոր պահել ։
Ցընծացեալք այսօր և բերկրեալ քո տօնիւս
Տացուք գոհութիւն երրորդութեանն և փառս ։